ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ-25/25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի վկայականը բաղկացած է պատյանից, անվանական ներդիրից և Կոմիտեի ծառայողի անհատականացման համարի նշումով՝ Կոմիտեի տարբերանշանից: Վկայականի պատյանը պատրաստված է սև բնական կաշվից, որի չափսերն են 100մմ x 150մմ: Վկայականի կաշվե պատյանը մեջտեղից բացվող է, ունի վերին և ստորին գրպանիկներ: Վերին գրպանիկի արտաքին մակերեսը թափանցիկ նյութից է, նախատեսված է անվանական ներդիր տեղադրելու համար, ստորինը՝ բնական կաշվից, որի միջնամասը 50 մմ տրամագծով կաշվե մակերևույթ է, որի վրա տեղադրվում է տարբերանշանը: Վկայականի կազմի վերին թափանցիկ գրպանիկում նախատեսվում է տեղադրել Կոմիտեի ծառայողի լուսանկար պարունակող, երկկողմանի գրառումներ ունեցող, 85 x 55 մմ չափսի ներդիր: (Ներդիրը պատրաստվում է և տեղադրվում է Կոմիտեի կողմից) Վկայականի կաշվե պատյանի ստորին գրպանիկում ամրացվող տարբերանշանը Կոմիտեի ծառայողի վկայականի համարով արույրե մետաղանիշ է, որի վրա դրոշմված են Կոմիտեի ծառայողի անհատականացման համարը և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը: Տարբերանշանի դիմերեսին՝ ներքևում, կիսաշրջանաձև տեղակայված է ժապավեն, որի վրա կորաձև հոծ սև գույնով, հայերեն մեծատառերով գրված են «ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» բառերը: Տարբերանշանի դիմերեսի ուռուցիկ և զարդանախշ կենտրոնում տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը: Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշի վերևում կորաձև, աղեղանման հոծ սև գույնով, հայերեն մեծատառերով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերի

	վերևում կորածև, աղեղանման տեղակայված են ՀՀ դրոշի գույները՝ կարմիր, կապույտ և նարնջագույն: ՀՀ դրոշի գույների վերևում կորածև, աղեղանման հոծ սև գույնով, անգլերեն և ռուսերեն մեծատառերով գրված են «ANTI-CORRUPTION COMMITTEE OF THE REPUBLIC OF ARMENIA» և «АНТИКОРРУПЦИОННЫЙ КОМИТЕТ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ» բառերը: Տարբերանշանի դարձերեսին նշվում է Կոմիտեի ծառայողի անհատականացման համարը: Տարբերանշանը երկշերտ լաքապատված է, դարձերեսին ամրացված է պտուտակ-պնդօղակով՝ պատյանին փակցնելու համար: Տարբերանշանը պետք է ամրացված լինի կաշվե պատյանին՝ համապատասխան պնդօղակի միջոցով: Ստորև ներկայացվում է տարբերանշանի նկարը. Վերջնական արտաքին տեսքը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ-25/25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	